ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՊԱՐՈՆ Է. ԲԶՆՈՒՆՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ընտանիքի սոցիալական գնահատման բաժնի փորձագետ Աննա Դավթյանի՝ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ՝

- Պատրաստել եմ քաղաքացիների՝ այդ թվում առցանց ստացված դիմումների, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմից, այլ գերատեսչություններից և կազմակերպություններից ՀՀ ԱՍՀՆ հասցեագրված գրությունների պատասխաններ,
- Մասնակցել եմ սոցիալական գնահատման բնագավառը կարգավորող օրենսդրությանը վերաբերող գրությունների պատասխանների նախագծեր,
- Կազմել եմ մի շարք պաշտոնական գրությունների, զեկուցագրերի նախագծեր՝ նախարարություններ, գերատեսչություններ և կազմակերպություններ ներկայացնելու համար,
- Իրականացրել եմ փախստականների ինտեգրմանն ուղղված ծառայությունների քարտեզագրում: Ներկայացրել եմ փախստականների ինտեգրման նոր ծառայությունների և դիմակայուն մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկներ,
- Կատարել եմ «ՀՀ-ում փապստական ճանաչված անձանց բնակարանային ապահովության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022

թվականի նոյեմբերի 10-ի N 1711-Ն որոշմամբ հաստատված միջոցառման իրականացման ուղղությամբ աշխատանքներ,

- Մշակել եմ փախստականներին տրամադրվող ծառայությունների համար անհրաժեշտ մեթոդական գործիքներ և ապահովել դրանց կիրառելիությունը ՄՍԾ տարածքային կենտրոններում (թարգմանչական ծառայությունների տրամադրման նպատակով),
- Համակարգել եմ պետության կողմից տրամադրված ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց տեղափոխմանը, կացությանը և հումանիտար աջակցության տրամադրմանն առնչվող աշխատանքները,
- Մասնակցել եմ «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման ենթակա սոցիալական տներում ժամանակավոր կացարանի հատկացման նոր ընթացակարգի մշակման աշխատանքներին,
- Համակարգել եմ «ՀՀ միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2025-2035 թվականների ռազմավարության» վերանայման համատեքստում Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի հետ տեղահանվածների ներառման և համախմբման վերլուծության առաքելությանն առնչվող համագործակցության աշխատանքները,
- Բաժնի պետի հանձնարարությամբ կատարվել են բաժնի գործառույթներից բխող այլ աշխատանքներ:

Ընտանիքի սոցիալական գնահատման
բաժնի փորձագետ՝ Աննա Դավթյան